

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԵՄԱԿ ԽՄԲԸԳՐՈՒԹԵԸՆ

Արժ. Հայր Էմբաղեր

Դրութեանս հետ պատիւ ունիմ ուղարկելու Զերարժանապատուութեան երկու զրութիւնք, որոնք, եթէ արժան կհամարէք, չնորհ արէք հրատարակելու ձեր պատուական «Լումայ»-ի մէջ. Այդ զրութիւնները ստացել եմ մեծ. պ. Յովհաննէս Յար. Սուլանաճեանցից, որ գտել էր նրանց իւր հօր, ի Ցէր հանզուցեալ Յարութիւն աւազ բահանայի թղթերի մէջ: Դոցանից առաջինը՝ հանդ. Ստեփաննոս Եսայեան նաղարեանցի նամակն է առ Բարսեղ արքեպիսկոպոս Աժդարխանի թեմական առաջնորդը 1848 թուականից Ղազան քաղաքից, առ նամակադիրը հայապարսիկ զպրութեան ուսուցչապետ էր: Բովանդակութիւնը պարզ է և հասկանալի:

Երկրորդ զրութիւնը «Թագուն» վերնագիրն է կրում, ոչ հեղինակի անունն ունի և ոչ էլ թէ ումն է ուղածայն: Միայն երեսմ է, որ նա վերաբերում է 'ի Ցէր հանզուցեալ Միքայէլ նալբանդեանցի կալանաւորելուն և ոստիկանութեան միջոցով նրան երջանկայիշտակ նիրակէս ե. Աշտարակեցուն ուղարկելուն դատուելու. համար-Պարզ է նոյնպէս, որ «Թարուն»-ը զրած է Մոսկուայից:

Այդ զրութիւնը ընթերցողներին փոքր ի շատէ պարզելու համար ստիպուած եմ դիմել յիշողութեանս: Երջանիրական և Բեսսարաբիայի առաջնորդ Մատթէոս Վեհապետեան Սրբեպիսկոպոսի մէջ տարածայնութիւնը կար, 'ի միջի այլոց և հանդ. Խաչատուր աղայ Ղազա-

բեանցի երկու դստերց ամուսնութեան առթիւ նորա երկու քեռորդոց՝ իշխան Արամելիքի և կոմս Դելիանովի հետ, որ թոյլատրել էր Մատթէոս Ազքեպիսկոպոսը, որի մօտ քարտուղարի պաշտօն էր վարում չորս աստիճանաւոր Միքայէլ նալբանդեանցն և ինչպէս ասում էին, մեծ ազդեցութիւն ուներ նորա վերայ:

1853 թուականն էր, երբ Դորպատից (այժմ Խերեվ) Թիֆլիս գալիս ամբողջ մայիս ամիսն անցուցի նոր նախիջեանում ծնողաց մօտ, Մայիսի վերջին Խուերին էր, որ նախիջեանում լուր տարածուեցաւ, թէ նալբանդիանցը Քիշնեից եկել է: Նոյն օրը նախիջեանի քահանայք փիլմով ներկայացան նրան, որ ապացոյց էր նորա աղջեցիկ անձն լինելուն: Այդ միջոցին նոր նախիջեանի Մագիստրատը ստացած էր հրաման Կովկասի փոխարքայ իշխան Վօրոնցովից, համաձայն պահանջման լնդհանրական կաթողիկոսին ներսիսի, կալանաւորել Միքայէլ նալբանդեանցին և ոստիկանութեան միջոցով ուղարկել ներսէս Ե.-ի մօտ: Նոր նախիջեանի քաղաքագլուխն էր Յարութիւն և ալիքանը: Սա հրամանի կատարումը թողնում է միւս օրուան, որպէս դի վեթ մի օր ծնողները վայելեն իրանց որդու տեսութիւնը: Վորոնցովի հրամանը գաղտնի էր և Խալիքեանը ապահով էր, որ նա ոչ ոքին յայտնի չէ: Նալբանդեանցի գալստեան երեկոյ, ՚ի Տէր հանգուցեալ Գարրիէլ աւագ քահանայ Պատկանեանցը, որի աշակերտն էր եղած նալբանդեանցը, զրօննելու զնաց վերջինի հետ քաղաքից դուրս: Ի՞նչ խօսեցին, ի՞նչ հաղորդեցին միմեանց յայտնի չէ: Միայն միւս օր նալբանդեանցի հօր տանը սուպէ էր, որովհետեւ այդ գիշեր նա անյատացել էր, շգիտէին ուր է վնացի կամ արդեօք Դոն վետը չէ ընկել և կամ սպանուել: Մնցաւ մօտ 10 օր և լուր տարածուեցաւ նոր նախիջեանում, որ Միքայէլ նալբանդեանցը Մոսկուայումն է: Բացատ-

բուեցաւ զործն այնպէս, թէ Միքայէլ նալբանդեանցը Տէր-Դարրիէլ Պատկանեանցից իմանալով իւր կալանաւորութեան հրամանը, նոյն գիշեր ծնողներիցն էլ գաղտնի զնացել էր Ծոստով և այսուեղից փոստային կառքով թռել էր Մոսկուա, ուր պաշտպանութիւն էր գտել. մնացածը պարզուում է «Թարուն» գրուածքից:

«Թարուն»-ի հեղինակն աւելի քան հաւանական է թուում մեղ, թէ է Մսեր մազիստրոսը Մսերեանց, որին մի քանի տարի աշակերտած լինելով և նորա ձեռագիրներ շատ արտազրած լինելով, նորա զիրը շատ ծանօթ է ինձ:

«Թարուն» գրուածքն, ինչպէս երեսում է, ուղղած է եղել երջանկայիշատակ ներսիսին մտերիմ մի մարդու, բովանդակած տեղեկութիւնքը նորին Սծութեան հազորդելու համար. Այլ թէ ինչպէս են ընկել այդ քնազիր գրութիմքը հանգ. հայր Սուզանաճեանցի ձեռքը, ինձ անյայտ է:

Պ. Ս.

Ա.

Նորին Սըբազնութեան

Տեառն Բարսողի վիճակաւոր Առաջնորդ Արքեպիսկոպոսի

Ս. Նազարեանց մազիստրոս Հայապարսիկ Դպրութեան և վարժապետ Հայոց լեզուի ի Համալսարանին Ղազանու.

Խնդալ, հանդերձ բազում բարեմաղթութեամբ ընդ մուսու նորոյ տարւոյն.

Անհրաժարելի և բնական իմն սովորութիւն է որդուց մարդկան հպաւորիլ իրերաց, հաղորդեցուցանել զայլս իւրոցն խորհրդոց և հաղորդիլ այլոցն, որոյ վասն և ստեղծաւ մարդէակ բանական, այն է մտածող և խօսուն միանգամայն: Իշնաշնարհիկ կարողութենէ աստի խոկալոյ և արտայայտելոյ զիսորհուրդս մտացն յառաջ եկին ի սկզբանէ անտի մինչեւ յօրս յայս միաբանութիւնք, ընկերակցութիւնք անհամարք վասն. աշխարհաշնչն գործառնութեանց որ ի նիւթականացն և որ յիմանալեացն կարգի: Ահա այսչափ ազդոյ և մեծամեծս ներգոր-

ծող զօրութիւն մարդկային բանի և հանճարոյ՝ ըստ որում բան
և խօսք նոյն գոլովի. զի որ խօսին մտածէ և որ մտածէն խօսի,
և զիս այսօր համարձակեցուցանէ ելանել ի խոհական պատ-
գամակցութիւն բնդ առնդ Առաջնորդի և ընտրելոյ առ. ի լի-
նել գլուխ մտածող և յառաջածու բարի բարի գործոց առ-
ձայս Յաշտարիսանու. Չեն իմ բանք աստանօր զիրաց անձնա
կանաց ոլպէս մուտք գրուածոյս ինքնին ուսուցանեն, այլ
զազդայնոց և զհայրենեաց միայն, որք կարօտին այսօր իմոց
ընդ մմծիթ խորհրդածութեանց. Ամս ութն ուսեալ մեր առ-
սուս Ներոպէական դաստիարակաց ի Դերպտեան կայսերական
Համալսարանի Լիֆլանդիոյ, նոյն և՛ թէպէտ յոչ կամաց՝ ար-
ժանաւորեալ վարժապետական աթոռոյ ի համալսարանիս Ղա.
զանու ըստ մասին Հայոց լեզուի և դպրութեան, ոչ միանգամ
ի հեռաւոր վայրացս խօսեցաք գրոյ յունկն և նախորդին ձե-
րոյ Տեառն Սերովէ Արքեպիսկոպոսի, և հայրենակցացդ մերոց
ի Յաշտարիսան զտառապեալ վիճակէ լուսաւորութեան Հայոցս
ի Ռուսաստանեայս. մին բազումս խստացեալ և կատարեաց
ոչինչ, մինչեւ փոխիլ յաշնարհէ՞ չգիտեմ՝ թէ զ՞ո՞ր բարի յի-
շտակ իւր թողեալ յազգիս. իսկ միւսք այն սակաւ մի ըն-
դուստուցեալ ի քնոյ թմրութեան հաւան զոնձինս ձեւացուցա-
նել ոչ տարակուսեցան, բայց գործն առողջ զիհանդութիւն
ախտացեալ՝ զնի տակալին ի մահին. տկար անզործութեան:
Բաց աչօք տեսանելով զօր քան զօր պայծառանալ և բարգա-
ւաճել Ներոպացի ազգաց յամենայն հանդէսս ուսմանց և ճար
տարութեանց, իսկ զհայս մին խսւար և անպիտան յամենայնի,
այն անլեզու և անասուն միանդամայն՝ ուրեմն և անլնդու-
նակ իսկ մշակելոյ առ ինքիանս զգիտութեանցն անդաստան,
ըստ որում աշխարհաբար լեզուն մինչեւ ցօրս ցայս ոչ յումե-
քէ ի կիր արկեալ և մաքրազարդեալ զի իցէ գործի յաջողակ
յուսմանցն աւանդութեան, իսկ հին լեզուն մեր ժանկոտեալ
մինչ խսպառ և անհասկանալի ժողովրդեան, ուրեմն և անպի-
տան իբրեւ դործի հասարակաց լուսաւորութեան. աչօք բացօք-
կրինեմ՝ տեսանելով զայս ողորմ վիճակ ազգիս, զ՞ո՞ր այլ պի-
տեւան խորհուրդ, և զ՞ո՞ր այլ առ ի խորոց սրտի ցանկութիւն
փափագելի մարթ էր ինձ հնչեցուցանել յականջա մերայնոց
քտն զոր հնչեցուցաքն մինչեւ ցայսօր ոչ մի անդամ կամ
երկիցս և կամ երիցս այն անհամար անդամ. իմա դու ինձ
զմիայնակ փրկաւէտ այն խորհուրդ և ցանկութիւն՝ զի միա-
ըանեալ հայոց յաշտարիսանու զսիրտ և զհոգի այն և զձեռս
միանդամայն, փութասցեն հաստատել զընկերութիւն ինչ հայ-
թենասիրական և կարգել օրինաւոր. ուսումնարան ինչ եւր-
ոպական փիտութեանց, բայց հայրենի ոճով նոյն և ի գործ ար-
կանել զանդործն մինչեւ ցայսօր տպարան եւ այլն եւ այլն եւ
այլն. Զանհրաժարելի կարեւորութենէ բարեկարգ ուսումնա-

բանի վասն Հայոցս, նոյն և զայլ ամենայն վերաբերելոցն յայն մանրախուզիւ խօսեցեալ է մեր ի ճառի յայնմիկ առ ընակիչս յԱշտարիսանու ի հայոց ազդէ զոր կարող է Սրբազնութիւն ձեր ստանալ ի պարոնէ Մելքքեանց կամ Բալասանեանց և լի կատարեալ վերահաս լինել որպէս մերոցն խորհրդոց նոյն եւ ճշմարտութեան նոցին, եթէ կամ ինչ իցէ արկանել և զներն լումայ ի գանձանակ աղքատ և չքաւոր ուսմամբ Հայրենեաց մերոց: Զի՞նչ. ոչ թէականաւն պարտ էր այսօր խօսիլ ընդ ձեզ, այլ խոստովանիլ մերկապարանոց, զի պարտականութիւն էր ձեր իբրեւ առն լուսաւորելոյ և զուսմանցն յարդ և արժանիս քաջ ճանաչողի ելանել յասպարէս Հայրենասիրութեան, գործել և կատարել՝ զոր այլք անտես արարին, կամ ընդունայն և սուտ խոստացան. Կամիք զանմահութիւն ձեզ ժառ. ուանդել և զանթարշամելի մշտականաչ յիշտառ ի տարեգիրս մարդկութեան. ահաւասիկ է ուղին՝ ուղին՝ զոր ունի բանալ աջ ձեր որդոց ազդին ի տաճար մուսայից Քննեցէք զգիրս, զի դուք համարիկ նոքօք ունիլ զկեանս յաւիտենականս. յովի. Ե 38: Առանց ուսման չիք Աստուած, չիք քրիստոնէութիւն կատարեալ, չիք գիտութիւն պարտականութեան առ Աստուած և ընկեր, չիք այս և շինութիւն և լուսաւորութիւն աղզի: Զայ. սոսիկ և գուշք գիտէք. խոստովանիմ և հաւատամ. բայց ասեմ նոյնակս աներկիւղ. զի ժամանակ մեր, տառապեալ վիճակ ազդի մերոյ գործ խնդրէ այսօր, գործ կենդանի, գործ խօսուն. լոկ բանիւք ոչինչ վճարի այսօր. պէտք են և գործունեայ ապացուցից մերոյն հայրենասիրութեան. ապա թէ ոչ. սուտ է ամենայն Հայրենասիրութիւն. սուտ է ամենայն սէր առ ընկերն:

Զոր այլք ոչ արարին, մնայ ձեզ առնելոյ. ով գեղեցիկ և նախանձելի ասպարիսի կենաց պատուական սրբազնութեանդ: Ե՞լ ապա ի հանդէս հայրենասիրական գործոց և ցոյց ազդիդ թէ զլուխ ես նորա խոհական և արժանի. ճեպիւ միաբանեան ի մի մարմին համաձայն զամենայն խայինս քո. քաց մեզ ըզփակեալ և զկցեալ դուռն լուսաւորութեան, լուսաւորութեան նւրովէականի և տոնը մեզ ճանաչել և պատուել զինչ ի գործոց քոց: Կամիք և զիս ունիլ գործակից ձեզ և օժանդակ. ոչ յամեցայց և ես երազել առ ձեզ՝ լուեալ զձայնն երանաւէտ եթէ պատրաստ է արդէն անդաստանն մշակութեան, բացեալ է տաճարն . . . *) սիրագործ աջով մեծիդ Բարսղի և պատրաստ է ամենայն ինչ առ ի մուժանել զմանկտին ի պաշտօն գեղեցկացն քան զբնաւս էից, ի պաշտօն ասեմ հայրենի և հարազատ ուսումնականութեան և դաստիարակութեան յազգս ազգս գիտութեանց և ճարտարութեան:

*) անընթեռնլի. Մ. Խ.

Փոքը ի շատէ ազդելով պատուական սրբագնութեանդ
զմիտու մեր,

ի յունիարի 6 1848
ի Ղազան

միշտ պատրաստական Մառայ Զեր
Աննիաննու նազարեանց

մնամք

Բ.

Թ ա գ ո ւ ն

Ա. Ե. Նազարեանց յետ երաշխաւոր դահճն կացուցանելոյ վասն Նալբանդեանի, սուստ վկայութիւն ևս առեալ ի բժշկէ զհիւանդութենէ նորա, արգել մինչև ցայսօր զկատարումն պահանջողական հրամանի Տեղակալին Կովկասեան սահմանաց՝ ծանուցելոյ ի Մագիստրաթէն Նոր Նախիջեանայ ի Պօլիցիայն տեղույս Նև ոչ այս միայն, այլ և բաղրման ինչ զրեալ առ Իվան Դաւիթիչ Դէլեանովն ի Պ. Բուրգ, յորդորեաց և հաւանեցոյց զնա պաշտպան կալ ստահակին ամենայն զօրութեամբ, և զամենայն հնարա ի գործ դնել յազատութիւն նորա ի ձեռաց կաթողիկոսին, Նև նա շարժեալ ի թախանձանաց անխոհեմ խորհրդատուին, և կամելով զստահակն կացուցանել վարժապետ ի ճեմարանի, դահեալ է չգիտեմ որպէս զնարն հաստատելոյ ի Աէնաթի Տէրութեան զարձակումն նորա ի Հոգևորական կոչմանէ. և ի զիմաց հոգաբարձուի ճեմարանին Աղայ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց գրել տալով զառանձին նամակ առ Սըրբազնագոյն կաթուղիկոսն՝ ծանուցեալ է, թէ «Նալբանդեանն չէ կարելի առաքել ի Նախիջեան կամ ի Տփիսիս, ըստ որում ճիւանդ է նա, և այն. և թէ արձակեալ է նոս այժմ ի հոգենորակոն կոչմանէ, *) գործոց նորա կամ դատաստանն՝ ոչ պատկանի հոգենոր Ատենից այլ՝ Սէնաթի Տէրութեան, և այն:

Այս ամենայն ներդործութիւնք Դէլեանովի՝ ընդդէմ էին և են թէ կառավարչի ճեմարանին, թէ գերազնուուի տիկնոց Եղիսարէթի Նկիմովնայի, և թէ այլոց ամենեցուն՝ որ ցանկան պահպաննել միշտ զպատիւ ազգին, զպատիւ և զարժանաւորութիւն Սըրբազնագոյն կաթողիկոսին, եւս և զպատիւ Լազարեան տաճմի և զնեմարանի, բաց ի Նազարեանցէ միայնոյ, որ գուրկ գորով յերկարախոն տեսութենէ, և ատելութիւն եւս ունելով թէ առ Նորին վեհափառութիւնն և թէ առ Զեր՝ ջանայ միշտ զհակառակն ներգործել բանիւ և գրով, թէն այսօրինակ ջանք նորա յնչ բարին՝ հակառակի և օրինաց Տէրութեան, որ զիրաւունս արձակելոյ զեկեղեցական անձինս հայազգիս ի հոգեռական կոչմանէ և ի պաշտօնէ՝ սեպհականեալ է միայն

*) Թէրժը պատառւած լինելով անընթեռնի է. Ծ. Խ.

Սիւնհողոսին, կջմիածնի, (որպէս տեւանի ի Սահմանադրութեան որ յաղագս կառավարութեան եկեղեցւոյն հայոց, ի համարն 110), Հոգաբարձուն ճնմարանի՛ (որ ի 17 փետրվարի եկեալ այսր դարձաւ անդրէն ի Պ. Բուրզ ի 27 նոյն ամսոյ), չէ մեղադրելի ի մասինս յայսմիկ քանզի նա պարզամիրտ և բարեհողի ոմն դոլով՝ դիւրամչտ է յոր և իցէ կողմն՝ ըստ թելադրութեան խրատտուաց, և մինչ աստ էր նա, բարեմիտ և աղդասէր անձինք, և առաւել կառավարին ճնմարանի, բազում ինչ խօսելով բնդ նմա՝ խելամտեցուցին զնա, թէ այնօրինակ անհանձար ճիզն նազարեանցի և այնչափ ջանադրութիւնք ՚Իէլեանովի ընդէմ իրաւանց հայրապետական իշխանութեան, ի վախճանի անպատուութիւն և ամօթ մեծ ունին բերել թէ պաշտպանացն յիշատակիլոց, թէ ճնմարանին, և թէ համօրէն Լազարեանց տոհմին, Մանուցին ևս՝ 1) թէ անպատկառ այն Նալբանդեան առ ծածկելոյ զայլ ամենայն յանցանս և զչարագործութիւնս իւր՝ որոց վասն կոչի նա յատեան Սրբազնագոյն կաթողիկոսի, խորագիտուութեամբ հաւատացուցեալ է ՚Իէլեանովին թէ պատճառն կոչելոյ զիս կաթողիկոսին՝ է միայն Պատկն Զեր՝ զորոյ զթոյլուութիւնն ես ինքն ի գուշւ հանեալ եմ, և այլն, 2) թէ՝ յայլ սակս ստահակն այն զՊատկի անունն միայն տայ, զի ցուցցէ՝ թէ ի պատճառս այնօրիկ ունի ինքն անբախտութեան հանդիպել, և զի Լազարեանք ևս պարտաւորեսցին պաշտպան կալոյ ինքեան. և այլն, 3) թէ՝ այդպէս անիրաւարար պաշտպանելն զամբասատանեալն ի բազմաց զստահակ յանցաւորն և պահելն զնա ի Մոսկով կամ ի Պ. Բուրգ, կարէ պատճառս տալ ծայրագոյն Պատրիարքին՝ ըստ իւրոց Պատրիարքական իրաւանց ի գործ դնել զհոգեսորն իշխանութիւն՝ բողոքելով ուրհարկն իցէ. և յայնժամ վերջինն չար քան զառաջինն լինի, և այլն և այլն:

Զայսոսիկ լսելով Աղա Յովհաննէսն Յովկակիմեան Լազարեանց ծանեաւ զվրիպանս իւր և ստրջացաւ վասն . . զնամակ առ վեհափառ հայրապետն ըստ խորհրդոյ և նախանձանաց ՚Իէլեանովին ևս որովհետեւ մոռացկոտ է յոյժ նորին գերազանցութիւնն, յաւելին արդարախոն անձինքն զայս ամենայն գրով ծանուցանել ՚Իէլեանովին՝ որ կայ ի Պ. Բուրգ, Բայց զինչ օգուտ. նա ինքն ՚Իէլեանովին յորդորեալ ի զրութեանց նազարեանցի, ոչ միայն անհաւան գտանի այսոցիկ զգուշաւոր խորհրդատուութեանց բարեկամաց, այլ և մեղաղիր ևս լինի նոցա. և հաստատելով ի մոի՛ պաշտպան կալ ամենայնիւ ստահակին, և պատզնա կացուցանել ի դատողական քննութենէ սրբազնագոյն կաթողիկոսի կամ Սիւնհողոսին կջմիածնի, ջանայ այժմ ըստ առաջադրութեան և ինդրոյ վիճակաւոր արքեպիսկոպոսին՝ ամրառնալ զնա ի սոսկական վիճակէ անտի յաստիճան Կօլէժակի բէկսթրաֆօրի. և զայսոսիկ լսելով ստահակն, առաւել լուսւց և.

ևս համարձակութիւն առեալ՝ աղատօրէն շրջի ի քաղաքիս և որ զդալի ևս է ճանաչողաց զպատիս և զանպատօռութիւն համագդային՝ յանդզնագնյան բարբար կ զանձնէ՝ պարծելով և հրատարակելով ամենայն ուրեք, թէ տոսկին իւր ներսէս չունի իրաւունս և ոչ իսկ իշխանութիւն կոչելոյ զինքն յատեան իւր . և թէ քինքն չէ նորա ծուայ, չէ ընդ իշխանութեամբ նորա, և այլն. եւ զմէնջ՝ որպէս և զմենծարու Աղայ Յարութիւնէ Պօղոսեան Խալիպեանց՝ անհամեսոս զօղանջէ, զերկոսեանդ համարելով իւր թշնամիս, և այլն:

Թէպէտև կամք էին Դէլեանովի՝ զնալրանդեանն վերստին մուծանել՝ ի ճեմարանն պաշտամմբ ուսուցչութեան, սակայն կառավարիչն ճեմարանի չէառ. յանձն՝ ասելով թէ «Հարեմ զայդ առնել յառաջ քան դտեսանելն իմ զդրաւոր հանութիւն Պատրիարքին առ այդ: Ուստի կայ այժմ Նալրանդեանն անդործ և անպաշտօն, և բնակի ի միում ի տանց ճեմարանին ստանալով ամսական ունդիկս յապրուստ անձին, թէն ինքն ևս ունի ասեն հարստութիւն դրամոց՝ աւելի քան զ . . . հազար արծաթ ուուրեաց:

ՍՍԻ ԵՒ ԸՏԸՆԸՑԻ ԻՇԽԱՆԸԺՈՂՈՎԸԸ

Կենսական լուրջ հարցերում և մանաւանդ եկեղեցական խնդիրներում որոշութիւնը և հաստատուն հաւտարմութիւնը անխուսափելի պայմաններ են: Դաւանական ու կանոնական անորոշութիւնը պատճառ է դառնում տգէտների իրարանցման: Եկեղեցու գլխի վարդապետական ու կարգապահական մեղկութիւնը իւր հեռաւոր այն հետեանքն է ունենում, որ տգէտ ստորագրեալներն ու ինքնուրոյնաբար ճշմարտութեամբ գործելու անսովոր սպասաւորները ուղղակի թուլանում են, այլանդակւում և ամենալի միտք ու գործ պատանեկան թեթևամտութեամբ դատում, կատարում ու զոհում: Դլխաւորի զիջման մի քայլը ստորագրեալի մէջ խոտորնակ վազ է դառնում:

ՃԲ. դարում Գրիգոր Գ. Պահաւունի մեծ կաթուղիկոսի հետ եկեղեցական միութեան բանակցութիւն սկսան Նոր-Հռովմ ու Հին-Հռովմ: Նոր-Հռովմը բազմաթիւ գրագրութիւններից յետով զիջաւ իւր պահանջնե-